ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N4

ՀՀ ԷԵԲՊՆ ՋՏՊԿ «Ջրառ» ՓԲԸ-ի կարիքների համար ՀՀԷԵԲՊՆՋԿ-Ջ-ԳՀԾՁԲ-19/1 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգով էլեկտրական սարքերի վերանորոգման ծառայությունների ձեռքբերման գնահատող հանձնաժողովի որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերի գնահատման նիստի

ք. Երևան 05 մարտի 2019 թ.

ժամը՝ 12:00

Մասնակցում էին.

Հանձնաժողովի նախագահ՝	**Ս. Մելքոնյան** (համակարգում՝ ԳՊ/ԳԱՊ Գնման Պատասխանատու/Գնահատման Աշխատակազմ, գնահատման հանձնաժողովի ղեկավար)
Անդամներ՝	**Ա. Ջալադյան** (համակարգում՝ ԳՊ/ԳԱ Գնման Պատասխանատու/Գնահատման Աշխատակազմ)
	Ա. Գևորգյան (համակարգում՝ ԳՊ/ԳԱ Գնման Պատասխանատու/Գնահատման Աշխատակազմ)
	Ն. Համբարձումյան (համակարգում՝ ԳՊ/ԲԱ Գնման Պատասխանատու/Բացման Աշխատակազմ)
	Բ. Եդիգարյան (համակարգում՝ ԳՊ/ԲԱ Գնման Պատասխանատու/Բացման Աշխատակազմ)
Հանձնաժողովի քարտուղար	**Ն. Նիկոլայան** (համակարգում՝ ԳՊ/ՄՀՄ՝ Գնման Պատասխանատու /Մրցույթի համակարգող)

1. Որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերի գնահատման մասին

(Ս. Մելքոնյան)

Ընդունել ի գիտություն՝

Հրավերով սահմանված կարգով 1-ին տեղ զբաղեցրած մասնակցից՝ «Սինխրոն» ՍՊ ընկերությունից պահանջվել են որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերը՝

- հայտը ներկայացնելու տարվա և դրան նախորդող երեք տարվա ընթացքում, պատշաճ ձևով իրականացրած համանման (նմանատիպ) պայմանագրի և դրա հաշիվ ապրանքագրերի պատճենները, ինչպես նաև այդ պայմանագրի (պայմանագրերի) սահմանված ժամկետում կատարումը հավաստող ակտի (հանձման-ընդունման արձանագրություն և այլն) պատճենները:
- հաստատված այն տեխնիկական միջոցների տվյալները, որոնք մասնակիցը նախատեսում է օգտագործել պայմանագրի կատարման ժամանակ:
- հաստատված տեղեկանք՝ կնքվելիք պայմանագրի կատարման համար մասնակցի կողմից առաջարկվող հիմնական աշխատակազմի մասին: Նշված տեղեկանքին կցվում են նաև հիմնական աշխատակազմում ներգրավված մասնագետների հաստատած գրավոր համաձայնությունների բնօրինակից արտատպված (սկանավորված) տարբերակը՝ իրականացվելիք աշխատանքներում վերջիններիս ներգրավվելու մասին, ինչպես նաև մասնագետների անձնագրերի և որակավորումը հավաստող փաստաթղթերը:
- Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե հարցում է ներկայացվել առաջին տեղ զբաղեցրած մասնակցի՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների առկայության վերաբերյալ:

Հրավերով սահմանված ժամկետում ստացվել է մասնակցից պահանջվող փաստաթղթերը, և հարցման վերաբերյալ եզրակացությունը:

1. Գնահատող հանձնաժողովն ուսումնասիրեց՝

1. Մասնակցի կողմից ներկայացված փաստաթղթերը և անհամապատասխանություններ չհայտնաբերեց:

Մասնակցի որակավորումը «Մասնագիտական փորձառություն» չափանիշի մասով գնահատվել է բավարար:

2. Մասնակիցը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված չէ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

Մասնակիցների որակավորումը «Մասնակցության իրավունք» չափանիշի մասով գնահատվել է բավարար:

3. Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի կողմից հարցման վերաբերյալ եզրակացությունը, որում մասնակցի՝

- երեք հաշվետու տարիների համախառն եկամտի հանրագումարը պակաս չէ ընթացակարգի շրջանակում ներկայացրած գնային առաջարկից,
- հաշվետու տարվա ընթացքում պարտավորությունների հաշվեկշռային արժեքը չի գերազանցում ակտիվների հաշվեկշռային արժեքը:

Մասնակցի որակավորում «Ֆինանսական միջոցներ» չափանիշի մասով գնահատվել է բավարար:

Գնահատող հանձնաժողովը որոշեց՝

1.«Սինխրոն» ՍՊ ընկերության հայտը գնահատել բավարար:
2. Ընտրված մասնակից ճանաչել՝ «Սինխրոն» ՍՊԸ-ին՝ 1-ին չափաբաժնի մասով:
3. Անգործության ժամկետը լրանալուց հետո ընտրված մասնակցին ներկայացնել պայմանագիր կնքելու առաջարկ:

Ընդունվել է որոշում՝ կողմ-5 դեմ-0

2.Գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրվա, ժամի և վայրի մասին

(Ս. Մելքոնյան)

Գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստ հրավիրել պայմանագիրը կնքվելու կամ չկնքվելու այդ հանգամանքը հայտնի դառնալու օրվան հաջորդող աշխատանքային օրվա ժամը 10:00-ին, ք. Երևան, Վարդանանց փակուղի 8ա 6-րդ հարկ, հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ- 5, դեմ- 0

Հանձնաժողովի նախագահ՝ _____ Ս.Մելքոնյան

Անդամներ՝ _____ Ա. Ջալադյան

_____ Ա. Գևորգյան

_____ Ն. Համբարձումյան

_____ Բ: Եդիգարյան

Հանձնաժողովի քարտուղար _____ Ն. Նիկոլայան